

ձիգ և ջանքեր կան, և ինչո՞ւ չասեմ՝ որ արդէն մի քանի տեղեր և ինչ ինչ կենսական խնդրոց մէջ խղճուած են ժողովրդական ձայները և իրաւունքները, որով եկեղեցականաց և ժողովրդեան մէջ խտրութիւնք սերմանուած են, և հետեւանքն ոչ այլ ինչ են՝ եթէ ոչ Արեւելոյ վտանգուիլը և դամ քան զգամ տըկարանալ և անհետ լինելն Ազգիս :

Արեւել չայեր, զգաստեղիք և քաջ ծանաչեցէք նախ ձեր պարտքերը և ապա ժողովրդական արդար և օրինաւոր իրաւունքները մեր Արեւելոյ և Ազգութեան մէջ, զգոյշ կացէք և պաշտպանեցէք, միանգամայն զայնոսիկ գործածել գիտացէք: Այս պէտք է գիտնաք, բայց խնդիրը օրինաւոր և հիմնաւոր բռնելով՝ հիմնաւոր յառաջացէք: Վա՛ւք ունիք արգարեւ շատ մեծ և վսեմ պարտաւորութիւններ, բայց զայնոսիկ կատարելով հանդերձ՝ կատարեցէք և Չեր նուիրական իրաւունքները: Քաջ գիտացէք որ օրինաւորութեան և արդար իրաւանց առջև ամենայն ինչ կը խոնարհի և կը փշրուի. անմերձեւալի և անսասանելի կարծուած ահագին ժայռերն և լեռներն անգամ առ ոչինչ են արդարութեան և իրաւանց առջև:

Թող չուովմն և այլ Արեւելիք խտրութեամբք վարուին իւրեանց զանազան ազգերէ և ցեղերէ բաղկացած ժողովրդոց հետ, բայց մեր շնորհմբ երբէք՝ որ մեր չայաստանեայց միասերունդ և համարիւն ազգէ կաղմեալ Արեւելոյ պաշտած և ի հետեւ նուիրագործած իրաւունքները և ժողովրդականութիւնը յօտարաց բռնաբարուի և հարուածուի. շնորհմբ որ՝ Արեւելոյ նուիրագործեալ իրաւունքներն

բնաջինջ լինին: Ապա թէ ոչ՝ մեր Արեւելոյ և ազգութեան գոյութիւնը կը վտանգուի և շուտով կանհետանայ:

Տգիտութիւնն մթնաշաղախ վարագործելով մօաց տեսութիւնները՝ կթիւադրեն յիշածիս պէս նոր սկզբունքները, սակայն երբ մեր բոլոր ուժը տալով՝ մի սիրտ և մի հոգի եղած՝ հանգարտ և շըրջանկատ կհետեւիմք հոգեւոր դպրոցաց հաստատութեան և արդիւնաւոր պայծառութեան, ոչ որ թող չտարակուսի՝ որ յայնժամ զիւրագոյն կպատուին տըգիտութեան սոյնպիսի նենգաւոր վարագործքը, և բարոյական և մտաւորական լուսաւորութիւն և զարգացումն Ազգիս առջև կհորդեն յառաջադիմութեան բաղմաբաղձ և գեղեցիկ ուղի, և հայածական կը վարուին ի մէջ օտարոտի և փնասակար սկզբունքներն և ջանքերն, և կապահովուին մեր պաշտելի Արեւելիք և Ազգութիւն:

Ահաւասիկ այսքան առայժմ կխօսիմ այս խնդրոյս վերայ, և գուցէ բարեպատեհ առիթ ունենամ կրկին գրելոյ:

ՂԱՆՏԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ

(Շ-բ-ռ-ն-կ-ն-ի-ն- և վերջ):

Երգ Օստիթաց, որչափ կարողի լսել, զեզանակ կամ զնմանութիւն բերէ Եւրոպականացն երգոց, Երկուք են յառաջագեմ ազինք Պովկասու, Հայք և Վիլք, բայց երգք նոցա այնպիսի եղանակով կամ պարս ձայնից ունին, զոր ոչ կարեմք յայտնել մերովք երաժշտական խաղիք (նօթ), գուցէ մի-

այն ջութակաւ։ Կան զի արտաքոյ են մերս եղա-
նակի, ուստի և յսելեաց մերոց անախորժաւորք։
Իսկ Օստիմացն, որպէս ասացաք, ունի զյայտնի
նմանութիւն կամ համաձայնութիւն ընդ եւրո-
պականին։

Շիխորէն քանասէր (Ֆիլոյօք) հաստատէ ու-
նել լեզուի Օստիմաց զվերաբերութիւն ընդ լե-
զուի Լնդկա — Գերմանական ցեղի. սակայն ըստ
իս այս լեզու հունի ամենեւին մերձաւորութիւն ընդ
Գերմանականին. բայց ընդհանրապէս բնաւորու-
թիւն ազգիդ այդորիկ՝ ցուցանէ մի լինել երկուց
ազգացդ։ Ծանր խօսուածք Օստիմաց, ներհակ
եղանակի արտասանութեան միւս ազգաց Սովկա-
սու, վերջաւորութիւն ձայնի, արտաբերութիւն և
հնչիւն բառից, (այլ ոչ բառք) ունին յինքեանս
Հիւսիսա — Գերմանական ինչ յատկութիւնս, այն-
պէս զի թէ փոքր ինչ ի բացեալ ի նոցունց կա-
ցեալ որ լուիցէ զխօսս նոցա՝ կարէ կարծել թէ
նիւրբին — Սաքսոնացի շինականք խօսին ընդ ի-
րեարս, միայն ի պատճառս հեռաւորութեան չկա-
րէ զիտել զի՞նչ խօսինն։

Թէև քանի մի ճանապարհորդաց՝ որք յառաջ
քան զիս և իմ, ծնան ի միտս կարծիք, թէ ընդ
մէջ Օստիմաց և հին Գերմանացւոց պարտի լի-
նել նկատելի մինչ ցարդ մերձաւորութիւն և փո-
խադարձ յարաբերութիւն, այլ այսու ամենայնիւ
դիտողութիւնք ներկայ ժամանակիս առաջի առ-
նեն միայն դժուարալուծանելի խնդիրս, մանաւանդ
յորժամ պատմութիւնն տուեալ զայն լուծեան
անցանէ։

Աւանդութիւնն բազմիցս ազդ առնէ, թէ ամե-
նայն ազինք Եւրոպիոյ նախ զառաջինն ծնունդ
առեալ յերկրիս յայսմիկ՝ որ ընդ մէջ Սեաւ ծո-
վու և Պասփից, անտի զկնի զաղթեցին յայլ եր-
կիրս. ըստ զիւցարանութեան Սկանդինաւիան
Գերմանացւոց, տոհմն Ազաց, ժողովրդովք իւր-
եանց աստի դաղթեցին ի հիւսիս Պատմութեամբ
վրայեալ է, թէ ի ժամանակս դաղթականութեանց
ազգաց, տոհմն Գերմանացւոց, Գոթք, բնակեցան
ի ստորոտս կովկասու, յորոց ձեացաւ հզօր տի-
րապետութիւն, որ զկնի ընջեցաւ ի Հոնաց, որք
նկղեալ վանեցին տարազրեցին զմեծ մասն Գեր-
մանական ցեղից յարեմուտս, բաց ի սակաւոց

ոմանց զօղիւրց ամրացելոց ի լիւրինս Սովկասու։
Գոթք դէժ՝ եղին խաղացին ի դրացի աշխարհն,
այն է ի Տաւրիկեան թերակղզին. մնացորդք նո-
ցա երևէին տակաւին ի վերջին ժամանակս, զու-
ցէ և այժմ իսկ հետադատութիւնն ի լոյս հանցէ
զհետս նոցա։ — Որպէս ասացաւ ի վերոյ, մասն
Գերմանական ցեղից եկաց մնաց ի վերայ լեռանց
Սովկասու։

Որո՞ւմ արդեօք յերկց նախադրելոցդ աւանդու-
թեանց տալ զմերձաւորութիւն կամ զազգակցու-
թիւն Օստիմաց և Գերմանացւոց. թէ աստացի
Օստիմք են մնացորդ սկզբնասեր ազգին, յորմէ
Գերմանացիք բաժանեցան, հարկ էր յայնժամ և
լեզուաց նոցա ունել համաձայնութիւնս կամ
մերձաւորութիւնս ընդ միմեանս. այլ ընդ հակա-
ռակն լեզու Օստիմաց մերձաւորացոյն է Պարս-
կականին քան Գերմանականին. թերևս պնդե-
ցուք ասել թէ լեզուք Պարսից՝ Օստիմաց և Գեր-
մանացւոց յառաջ եկին ի միում ժամանակի, և
ի միում տեղւոջ յարմատոյ անտի Լնդկա —
Գերմանականին։

Երկրորդ աւանդութիւնն զերկց Ազաց և ցեղից
նոցա յոյժ մթին է և անբաւական մինչ ի բա-
ցատրել պատմական ապացուցութեամբք զայդ
խնդիր։

Անայ մեզ միայն երրորդ աւանդութիւնն, թէ
Օստիմք յառաջ դան ի Գոթաց և այլոց Գեր-
մանական ցեղից նեղելոց կոտորելոց ի Հոնաց,
յորոց սակաւազցիւքն պատսպարեցան կացին ի
լիւրինս Սովկասու. և աստանօր դարձեալ տարբե-
րութիւնն լեզուաց կորուսանէ զյարդ աւանդու-
թեանն, բայց ի նկատի առեալ զյատկական գծա-
ղիրս բարուց գաղթելոց Գերմանական ցեղից,
մարթ է մակարելել, թէ նոքա ամբողջօրէն պահ-
պանեցին ի նոր աշխարհին զնախնդակ կարգ և
տոգրութիւն ատենին բարս իւրեանց, և ուսու-
ցին զայս ամենայն խառնելոց ընդ նոսին ազգաց.
յորս ծնունդ էաւ նոր լեզու ըստ պահանջման
անհրաժեշտ հարկին, որ պահպանեաց միայն ըզ-
քանի մի բառս և կազմութեամբ Գերմանական բար-
բառոյ. ո՞չ այս իսկ պատահեցաւ Ֆրանկաց և
Բուրգունտաց ի Գաղղիս, Գոթաց և Աւան-
դալաց ի Սպանիա, Լոնգոբարտաց յԻտալիա, Նոր-

մանաց ի Գաղղիա և Եթովպիա : — Հետևաբար հաւանական զայցէ ստել, թէ սերունդն Գոթաց, որ ի փայլատեանց զինուց Հոնաց զահի հաւրեալ ծածկեցաւ ի ծերպս Սովկասու, ընդ իւր խառնեալ միացոյց զնախնասեր բնակիչս Սովկասու զՕսսեթի և զԱլանս. գրաւեաց զերկիր նոցա և զկնի ժամանակաց ի նոցունց կազմեցաւ նոր ազգ, որ թէև չխօսեցաւ ի լեզու Գոթաց, այլ այնչափ ճշտութեամբ պահպանեաց զգոյութիւնն նորա, զկերպարան, զնախնդակ կարգս, սովորութիւնըս և առանին բարս, մինչև ամենայն Եւրոպական ճանապարհորդք իսկոյն ընդ մուտ դործելն ի նոսա՝ ի միտ բերին զԳերմանացիս :

Ար որ ցանկայ անթերի տեղեկութիւնս ունել զնշանաւոր ազգէս այսմանէ, արժան է նմա անշուշտ ընթերնուել զգրուածս Գիւրուայի, յորմէ ես միայն ահաւասիկ յառաջ բերեմ զքանի մի համառօտ դիտողութիւնս, որք ըստ մասին հաստատեն զբանս իմ, և ըստ մասին տեղի տան հետաքրքիր յօժարութեան ընթերնելոյ զճանապարհորդութիւնն նորա, Գիւրուա ասէ, թէ Օսսեթք ոչ մի մերձաւորութիւն կամ համեմատութիւն ունին ընդ շրջապատողս նոցին ազգս Սովկասու, և թէ նորա են զօր միութեան Հնդկա — Պարսկական ազգաց Ասիոյ, և Հնդկա — Գերմանականացն Եւրոպիոյ : որոց նշմարելի են յառաջիւս զացութիւնք ի հիւսիսային — արեւմուտս, յառաջքան զժամանակս պատմականս :

Արդէն կանխադրեմ ժամանակաւ ի հիւսիսային ստորոտս Սովկասու և առ ծովուն Ազախու երևին Մաքոդք, յորոց յիշատակեալ ծովն առնու զանունդ Մեօտիյեան : Հինգ հարիւր ամօք յառաջքան զթուական մեր, Սկիւթք խաղացեալք յԱսիատիւրեցին նմին զամս 28, ասի իբր թէ իշխանն նոցին բնակեցոյց զգերիս իւր (ի Միդիական ցեղէ) ի հիւսիսակողմն Սովկասու, յորոց բոտ ժամանակագրաց Արաց յառաջ եկն ազգ Օսսնի. (Օսսի, Օսսեթք), Օսսեթք բնակին ի կեդրոնի Սովկասեանց լեռանց, ի հարաւ յառաջաւոր լեռինս ի Աերիոյ, և ի հիւսիս ի զառիւլայրս և հովիտս Թերեքայ ցրնդարձակութիւնն Քապարտայ. հետևաբար Միդիական կամ Հնդկա — Գերմանական ցեղն բնակեալ կալաւ ի մէջ 2 երբեզ և 1 եկզի ազ-

գաց, յորոց առաջինն իսկապէս, երկրորդն հաւանօրէն, են ի Ֆինեան ցեղէ, երևի թէ այս ազգ տարածեցաւ յառաջին ժամանակս առաւել ի հիւսիս, ի ժամանակս, որոց ի վերջին ժամանակս ստուգեցան հետք յիշատակութեանց : Մատենագիրք որք նկարագրեն զանցս Մոնղոլաց ի վերջ ժԲ դարու, զայս երկիր բովանդակ, յարեւմուտս ցԳուպան, և ի հիւսիս ցԴոն անուանեն Օսսեթիս, միայն գրացի ազգք՝ Աիրք՝ Լեկզիկք և այլք, զայս ազգանունն Օսսեթս, իսկ ինքեանք Իրօն, կամ Իրամ, (հետևաբար Միդիա — Պարսիկք են), Եւրոպացի և Արաբ պատմիչք միջին դարուց զՕսսեթս և զԼեկզիս անուանեն Ալանս : Ամիակ և Մարցելին յամի 360 պատճառ այսպէս շիտեմալոյ ընդ միմեանս զերկու ազգսդ դնեն՝ թէ անունդ Ալան ընդհանուր է ամենայն ազգաց բնակելոց ի կողմանսդ : Նետոր Ռուս պատմագիր անուանէ զԱլանս Յօսս, ճանապարհորդեալ կրօնաւորք ԺԳ և ԺԴ դարուց, Յովհան տը Պլանօ, Վարպինի, Բուքրիկիսթ, Բաքս, և այլք, զազգն՝ որ ի հիւսիսակողմն Սովկասու բնակեալ ցԱրկայ (Էթիկ) և Դոն, մերթ Ալանս անուանեն և մերթ Օսս :

Առասպելաբանութիւնք Յունաց զՏիտանաց, Պրոմէթէասայ Դարգանեանց, յարեւելից անշուշտ ծնունդ առեալ են : Հերոդոտ (Գ. 15) ասէ թէ՝ Ասիա էառ զանունդ յԱսիոյ ամսւնոյն Պրոմէթէասայ. Էպիմեթէս և Պրոմէթէս որդիք են Յաբեթի, իսկ հնոցն աւանդութիւնք զբնակութիւնս Յարեթեանց դնեն ի շրջակայս Սովկասու. Պրոմէթէս ի բարձունս Սովկասու զողացեալ զհօր, և անդունոր փակեցաւ շղթայիւք ի ժայտս Վաուք — Ազ (անուն լեռանց) գուցէ նշանակիցէ լեռնն Ազաց. ԺԳ և ԺԴ դարուց կրօնաւորք, նաև վերջին ժամանակաց պատմիչք զՍովկասն անուանեն լերինս Օսսաց և Ալանաց :

Հետևաբար սա է նախնակոչ իսկական Ասիա. (Asia propria). Յոյնք, և յետ նոցա այլ ազգք լուսաւորք, սակաւ առ սակաւ զանունդ տարածեցին ի վերայ բովանդակ աշխարհամասին : Մասն ի բնակչաց այսր իսկական Ասիոյ գաղթեաց ի Սարսիս, յորոց յառաջ եկն անուն տեղւոյն « Փոքր Ասիա » : ի հիւսիսակողմն Գերմանիոյ պահպանին աւանդութիւն զելից Ազաց և անուանեց « Աս-

դարդ, Ասցիրուրգում, *) : Միով բանիւ հետա-
զոտութիւն անուանդ Օսսեթ, և ծաղման նոցա
յառաջ բերէ պարզումն մթութեան զաղթական-
նութեան և առասպելաբանութեանցն Եւրոպական
ազանց :

Երևի թէ նախ քան զպատմական յայտնի ժա-
մանակս, բնակէին Եւրոպա ազգք Ֆիննեան ցի-
ղից : Եւ և Փիննիկցիք կամ գուցէ եկք Քա-
նանցիք, սերունդք Բասքաց, Յունաց, Իլիրաց,
և Էթրուսքաց, զինի Յաբեթեանք, զաղթեալք
ի բունն Ասիոյ, յերկրէն Ազաց, Օսսաց, Օսսե-
թինաց Դեկալոնեանց, Գարգանեանց Գերմանաց-
ւոց, գուցէ և Կելտեաց և Սլաւոնացւոց, նախա-
նուն ազգք ըստ մասին հարստահարեալք, որպէս
Ֆինք, զետեղեցան կացին ի բերանս հիւսիսոյ,
ըստ մասին ի ծառայութիւն մատնեալք, խառնե-
ցան ընդ եկս : Երբեք կազմեցան նոր ազգք, որպէս
ի Յունաստան և Եփոսիայ, Զայսոցիկ մեծա-
մեծ տեղափոխութեանց Յաբեթեանց և Ասիաց-
ւոց վկայեն բազում անուանք տեղեաց, լեռանց,
և յատկապէս գետոց : որք տակաւին երկիր ար-
գաւանդ պահպանեն ապագայ հետազոտութեանց,
Օսսեթք զգետս անուանեն «Դոն», (զօ.) Զաու—
դոն, Ուրս—դոն, Արա—դոն, Աուալ—դոն, Թի-
նօ—դոն և այլն : և առ Եւրոպացիս բառդ այդ է
բազում անգամ արմատական վանկ յոյունց ա-
նունաց նշանաւոր գետոց : որով ցուցանի բնա-
կեալ զոյ այլոց ազանց ի կողմանսն. զօ. ի սահ-
մանս «բունն», Ասիոյ և Եւրոպիոյ կոչեցեալ,
Դոն, յառաջ Թանայիս, յետ նորա Դանապրիս,
(Դենպր կամ Գորիսթեն), Դանաթեր (Դենսոր),
յառաջ Թերաս, հիւսիսային և արեւմտեան Դիւ-
նա, Դվինա, Դունայ Յունաց (danabus, isker) և ըն-
Բ. սկսեալ յԱսիոյ ցեւրոպա գտանեմք զհնազոյն
վերջաւորութիւնս անուանց տեղեաց, ընդհանուրս
արմատական լեզուաց ազգաց հնոց, զօ. են վանկ-
քըս gert, kert, cert, նշանակիչք չըծապատեալ
պարսպեալ տեղոյ կամ քաղաքի. ի Միջագե-
տըս, յԱսորեստան և ի Հայաստան, պահպանին

ցարդ վերջաւորութիւնք, որպէս են՝ Երուանդա-
կերտ, Տիգրանակերտ, Համիրամակերտ և ըն. (քա-
ղաք Երուանդայ, քաղաք Տիգրանայ) : Եւրոպա
յաճախ գործածին մանաւանդ ի Սլաւոնական բար-
բոսս, որպէս gard, gord, gorod, grod, զօ. նով-
գորդ ի Ռուսիա, Նաուգարդ ի Պոմերանիա,
Բելգրադ ի Սերբիա, Յարգրադ (կ. Պոլիս), Բու-
գարդ, Գրոգնօ. այսպէս ի Սկանդինավիա և Գեր-
մանիա, Ասգարդ, Հիթուիգարդ, Մամիկիլգարդ,
ի Գաղղիա՝ Փերիգոր (Perigord), Եփոսիա՝ Գար-
գա, և ըն. Գերմանական garten, Լատինարէնն՝
hortus, Յունարէնն՝ Գրէշ, Սլաւոնարէնն՝ огородъ,
ըստ այսմ բերեալ է Եւրոպա վերջաւորութիւ-
նդ kint, kand, kanda, նշանակիչք վաճառա-
տեղոյ կամ կրպակի, և կցեալք ընդ անուանս
տեղեաց բազմաց, ի Հայաստանէ ցՀինգս, Թաշ-
քենդ, Սամարղանդ, Սինդաքանդա. վերջաւորու-
թիւնս այս կիրառական է մանաւանդ ի Կելտեան
երկրս :

Համառօտ դիտողութիւնքս երևի բաւական են
ի դարձուցանել զուշադրութիւն ի վերայ որանի
և ծննդարանի Եւրոպական ազգաց :

Ի զլուս երեսունչորսերորդ, Դիւրուա սկսեալ
խօսել զայժմեան Օսսեթաց, ապէ թէ՛ են սերունդք
Միտիա—Պարսկական ցեղի. լեզու նոցա, յառաջ
եկեալ ի Հնդկա—Գերմանականէն. չունին Օսսեթք
նշանագիրս, ի կիր առնուն զՍլաւոնացն, զհնարեալ-
սնն ի Քրիստոնէական դարս. ի սոյն լեզու տպա-
դրեալ են և գրեալ միայն քանի մի կրօնական
կամ եկեղեցական բանք. չունին պատմագիրս. իսկ
զպատմական անցս որդւոց յորդի տան աւանդու-
թեամբ, ըստ մասին նաև նշան արարեալ ի զլուս
և յիշխուրս զազանաց, զորս ի յուշ ապագայից
առկախեն առ տամբք և եկեղեցեօք. հասակնոցս
միջակ, կազմուած մարմնոց նոցա՝ ամուր, զղային,
մնային, և անձոռնի. երես բոլորակ, դուն ուրեք
թուի. շիկահերք, կապտակն. գծագրութիւն դի-
մաց՝ արտայայտիչ ապուշ մտաց. կանայք՝ կարճա-
հասակք, տղեղք, և սովորաբար փոխակաքիթք. —
Սոքա ամենեքին պարապին երկրագործութեամբ.
Իսկ յարհեստից և ի վաճառականութենէ զուրկք
են միանգամայն. եթէ գտանին ի նոսա և տունք,
որք յառաջ բերեն զճագումն իւրեանց ի նախնի

(*) Ի ստորոտս Կողկասոս բնակէին Ասկուրդք, տոհմ Օսսե-
թաց. Սարաբոն անուանէ զքաղաքն նոցա «Ասկուրդա», և չ.

իշխանացն տոհմից, չունին առանձին արտօնութիւնս: Օստեթք բաժանին յերկու կարգս. Ա. անկախք իշխանութենէ. Բ. արքունի հարկատուք կամ շինականք, և կալուածատեարց շինականք. առաջինքն բաց ի գլխաւորէ գերդաստանի իւրեանց՝ չճանաչեն ոչ մի իշխանութիւն, և չհաւատակին որ և իցէ գաւառատանի, որ էառ զէն, և միանգամայն ազատ:

Արքունի հպատակք՝ հատուցանեն տէրութեան զաննշան տուրս ինչ սահմանեալս յաւուրց անտի տիրապետութեան Արաց ի վերայ նոցա. կալուածատեարցն պատկանեալք՝ տեարց իւրեանց ոչխորս և այլ բերս երկրին:—

Էրբնկալութիւնն սուրբ համարի առ նոսա այլ միայն ի մէջ տան. աւազակութիւնն և զոգութիւնն սովորական դործ է նոցա և չհամարի բռնաւ անօրէնութիւն կամ չարիք, եթէ չկալան բղնա. «գոր ինչ գտանեմք ի վերայ մեծի ճանապարհին, յետուծոյ առաքեալ է մեզ, առած է ի նոսա: Օստեթք համարին առաջին երգմնադրուժ ազգ ի բնակիչս Աովկասու. հարաւայինքն՝ համեմատեալ ընդ հիւսիսականցն, ունին դարձեալ մասնաւոր կրթութիւն:—

Ընդհանրապէս քաջք են, համբերութեամբ տանին աշխատանաց, և յինչ ինչ դէպս թուին նաև բարեխորտք: այլ ոչ յորժամ արեալք իցեն:

Երկրագործութիւնն և տուարատածութիւնն կանանց է դործ աշխատանաց:—

Ի նստել զսեղանով, գլխաւորն նոցա առեալ ի մի ձեռն զհաց, ի միւսն զեղջիւր զինւոյ, կարգայ զաղօթս. այլք ունինդիր լինին բացաւ զիսով, և ապա սկսանին ուտել. թէ հիւր դք գտցի ի տան նոցա, ի ծաշել նորա՝ տանուտէրն մահակ ի ձեռնն նստի առ դրամբք, չմանակցեալ սեղանոյ նորա: Զիք առ սոսա օրէնք:— Արեժ արեան որպէս յԱրխաղըս և ի Զերբիզս, ապաէս թագաւորէ և ի սոսա. թէ դք անլուր գտաւ ձայնի կոչման թշնամւոյն ի մե՝ նամարտութեան, յախտեան կորեաւ յամթս ա՝ նուն նորա. ի սպանանել զերեւելի անձն, հատուցանեն զգին արեանն կրկնապատիկ, զկին՝ ըստ կնսոյն. զին արեանց է զանազան. վասն սղանման գլխաւորին նշանաւոր գերդաստանի ուրոք՝ վը-

ճարեն 18 անգամ 18 կով *), և անգս արժողս երկիցս 18 կով. թէ յանցաւորն չունի կարողութիւն այնչափ կովուց, ընուն զթերին որթով, խաշամբք, զինուք, և ըն. տղայն արժէ 36 կով. աղջիկն հայեցեալ ի հասակն և գեղեցկութիւնն՝ ի 18 է ց30 կով. սպանումն անտերունջ առն կամ օտարի՝ մնայ անպատու հաս. զհայրասպանն փակեալ ի տան այրեն, և զանդ կամ զինչս նորա քանդեալ աւերեն ի ցոյց սարսափելի ոճրոյն և ի գգուշութիւն անտի այրց. թէ դք սպանեալ զայր ոմն՝ փախեաւ ծածկեցաւ, արենակիցք սպանելոյն ունին իրաւունս տիրելոյ տան նորա և զոյից և գերդաստանի բաց ի կնոջէն. կամ եղբարք մարդասպանին թէ բնակին իմիասին, պարտին վճարել զգին արեանն, զսահմանեալն. պէս պէս են և զինք վերաց հասուցիցոց մարդոյ. բոտ կարեւորութեան իւրաքանչիւր անգամուց, սկսեալ ի միոյ ոչխարէ ցերիցս 18 կով. երեան ծանրաղին է քան զայլ տեղիս մարմնոյ, քիթն արժէ 100 կով, ձեռքն՝ ոտքն և աչք այնչափ արժեն՝ որչափ նոյն իսկ կեանք մարդոյ. բունի փախուցումն կնոջ հաւատար է ընդ սպանութիւն. եթէ փախուցեալն չէ ամուսնաւոր, փախուցանողն առ ի զերծանիլ ի տուգանաց և ի պատժոց՝ պարտի միայն ամուսնանալ ընդ նմա՝ այլ վճարելով նախ ծնողաց կամ եղբարց աղջկանն զսովորական զինն. բունի սպականութիւն անարատութեան և յղացումն՝ համարի մարդասպանութիւն. եթէ փախուցեալն ամուսնաւոր է, փախուցանողն անթերի հատուցանէ զտոյժ մարդասպանութեանն: Գլխաւոր երգումն նոցա է առնուլ զչունն և սսել «սա լիցի ի տեղուջ հարցն իմոց ի գերեզմանս նոցա, թէ ևս . . . և ըն. անարգեալ է որդի, որ թողու զհայր կամ զմայր կամ ի բաց հանէ զնոսա ի տանէ. հայրն իշխող է համբըն տան կարէ ըստ կամս անձին նշանակել զոք ժառանգ իւր, դուստրն չժառանգէ յետ հօր զինչս նորա. թէ չիցէ և արու զաւակ ընդ յարկան հայրենի, ամենայն զոյք և ինչք տանն հասանն արենակցաց արական սեռիս Աին առանց որդեջ

(*) Հայի Օստեթաց զանցանէ քան զայդ. այլ միայն սովորաբար համարեն. 18 անգամ 18. վեց անգամ 18. երկիցս 18. և ըն:

կամ թէ ունիցի և զգտորս, զամ մի միայն իշխէ ստացուածոց առն իւրոյ, և այն՝ ի հանել անտի զծախս թաղմանն նորա. յետ ամին յանձնէ ժառանգին, և ինքն պարտի երթալ նստիլ ի տան նորա. կամ թէ ժառանգն այն առեալ ի կնուածիւն զգտար նորա՝ յայնմ հետէ տայ նմա ըզանունդ Օստիժք զարձեալ են ի Քրիստոնէութիւն ի ձեռն թագաւորին Վրաց Վախթանգոյ, իսկ յամի 1200՝ թագուհւոյն նոցին Թամարայ, բայց չունելով յինքեանց քահանայս, և ոչ հաստատմիտք և ջերմեռանդք են ի Քրիստոնէութեանն. թէև պահպանին մինչ ցարդ Քրիստոնէական սովորութիւնք բազումք, և ծէսք. ի շաբաթ երեկոյի և ի Սիւրակէ օրն ի բուն բանան զղլուխս իւրեանց, երկցս ի շաբաթու պահեն պահս. յաւուր տօնի Ս. Եղիայի ի զոհ հանեն նմա զայծ, և խնդրեն զանձրեւ. յորժամ մերձ երթան նախնաւն աւերակ եկեղեցեաց, իջեալ ի ձիոյ հետի և բացաղլուխ ընթանան այնչափ, մինչև չգորիչ աւազ տեսանել զեկեղեցին. պահպանեն և զբառանօրեայ պահս, չուտելով զմիս, ձուկն, իւղ, և կաթն, Յորժամ վէճ և թշնամութիւն դադարեալ է ի մէջ նոցա, համախմբին սիրով յերկրորդ օր ծննդեան Քրիստոսի և յաւուր Հոգւոց, ի միասին յեկեղեցիս, ծանաչեալ զնոսա անվրդովելի ապաստանարանս, և անդ պատրաստեալ զանազան կերակուրս, ուտեն և ըմպեն. տօնախմբութիւնն այն յայնժամ համարի մանաւանդ ուրախաւտ, յորժամ ըստ կարճեաց նոցա հոգիքն ուտիցեն ինչ ի կերակրոց նոցա. (հանգոյն ամին ի Գերմանիա աւանդութիւնն տայ երկրորդ աւուր Ծննդեանն և առաջին զիշերոյն յերկոտասան սուրբ զիշերաց, վերաբերութիւն ընդ գերբնական զօրութիւնս). ի Սիւրակէ Զատիկն ժողովեալ ամենեցուն առ եկեղեցեաւ, մատուցանեն զոհս. զխաւորն նոցա զերկամն զոհին կապեալ ի մի փայտ առնու ի ձեռնին, և ի ծուկնս անկեալ հատանէ զայն ի փոքր փոքր մասուեն, և բաժանէ ժողովրդեանն, իսկ զմնացորդն ի հուր արկանէ. զինի փոքրր ինչ առեալ ի մոյն ուտէ ինքն, և զսկերան այրէ դարձեալ. զլուխ կենդանւոյն զնի յաւերակրս ի պէտս տարեհաշւոյն։

Քրիստոնէութիւնն պահպանեալ է միայն ի հարաւային Օստիժս, ուր Վրացի քահանայք կատարեն զքահանայագործութիւն. Ռուք յամն 1752 և 1815 ջան ի զործ եղին տարածել զնոյն և ի հարաւային բնակիչան, բայց անհնարին եղև. Տօնախմբին միայն զծնունդ ուստեր և մկրտեն զերեխայս. հանդէսք հարսանեաց և յուրարկաւորութեան թեմէ ինչ են. ի վերջնումն կոծն և բաղխեն զանձինս, կանսցք փետին զհերս զխոց իւրեանց և վիրաւորեն զանձինս քարամքք, զորս արեամբ թացեալ բնկենուն ի գերեզմանն։

Գնեն սոքա զկանայս. զին նոցա զանազան է յերկոտասանէ ց140 կով, կամ եօթն ձի. այրին արժէ զկէտն զնոյ կուսին. եղբայրն պարտի ամուսնանալ ընդ այրի կնոջ եղբօրն, թէև ինքն իսկ ունիցի կին, բաց աստի միայն, բազմակնութիւնն նուազ տեսանի ի նոսա եւ թէ ոք կանայս առցէ երիս, վերջին երկուքն բաց յառաջնոցն համարին միայն աղախնեայք, և որդիք արդանդի նոցա չկարեն լինել ժառանգ տանն. ուստի՞ ի ներքսս ի սոսա սարդեցաւ օտարոտի սովորութիւնդ. քրիստոնէութիւնն արգելու զայդ և հետի ինքեանք ի Հրէից. զուցէ միայն հասնական թուիցի ասել թէ բազումք ի գերեղոցն ի Հրէաստանէ յԱսիա, անցին բնակեցան և ի սոսա։

Եւ յրին հանգուցելոյն ազատ է ընտրութիւն առնել ընդ մէջ եղբարց առն իւրոյ, և որում հաւանեալն է մտանել ի կնութիւն. իսկ աղջիկն ամենին չկարէ ինքն ինքեան ընտրել փեսայ. բայց ի գարշելի և ատկի ամուսնոյ կարէ զերծանիլ անձնասպանութեամբ. կանսցք չտանին ընդ իւրեանս օժիտս, բաց ի քանի մի տնական կարասեաց, այս ինքն անկողնոյ, աթոռոյ և ին. Համարել դասեր ժառանգ անտի է, զի կանսցք համարին աղախնեայք արանց, թէև միանգամայն ազատք են ի կենցաղավարութեան, զի ոչ փակին յառանձին տեղիս, ոչ քօղարկին, ոչ վրդովին ի ներկայութենէ արանց, այլ և մասնակից իսկ գտանին նոցա ի խնջոյս և ի կարաւս. ի մտանել ուրուք ի տուն, յառնեն յոտին. վարժք են ի ձիավարութեան, և ասի թէ յառաջին ժամանակս ուղեկցէին արանց իւրեանց ի պատերազմ. ըմպին ըզգինի, որպէս և արքն, այլ չափաւորութեամբ.

առնուլ կամ մերժել աղջկան զշիշ զինուոյ, նը-
շանակէ զհաճութիւնն կամ՝ ահաճութիւնն յերթ
առնոյ Ռիբուա ինքն ինքեան հակառակախօսի,
զի ի վեր անդր ասաց, թէ ամենեւին չհարցանեն
զհաւանութիւն աղջկանն. ինձ երեւի թէ այս միայն
սովորութիւն է, և ոչ իսկապէս նշան ուշադրու-
թեան կամաց աղջկանն՝ որ չունի ազդեցութիւն
կամ յարգ:

Դարձ արարեալ յերեքն Սեպտեմբրի ի Տըփ-
թիս, ի վեցն նոյն ամսոյ դէմ եղեալ եկաք ի Մա-
ռան, ի Մառանայ ի Փոթի, և անտի ընդ նոյն
ձանապարհ՝ ընդ որ անցեալ էաք, գնալ ի Գեր-
մանիս:

Թարգմ. ԱՐԻՍՏԱՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԵՒԲԱԿԵԱՆ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՍՏՂԱՅԻՆ ՏԻԵԶԵՐԲ.

(L'UNIVERS SIDERAL)

ԵՐԿԻՆԲ ԵՒ ԱՆՐԱՆՈՒԹԻՒՆ.

Վեպէր, որոյ հանձարը ոչ մի ինչից
արդէլք ունէր, արդէն զծագրած է զնտե-
րի բնախօսական հրաշալի օրէնքները: Բո-
լոր աստղերը, ըստ նորուն ոչ այլ ինչ են,
բայց թէ մէկ մէկ արեգակ, մերինի նման,
որոց ամեն մէկը ունի իւր մոլորակային զը-
րութիւնը: “Կոյն իսկ և մեր արեգակն,
բոլոր իրեն ընկերակցող արբանեակների
հետ միասին ընկած է իբրեւ աստղ մի թա-
փառական տիեզերաց ովկիանոսին մէջ,
ուր կազմում է կեդրոնական կետը այն
աստղային փոշւոյ, որ անուանում են
“Ծիր կաթին”, և յս բոցաճաճանչ աստ-
ղը, ըստ գեղեցիկ այլաբանութեան Թէոն
աը Վալիւնի, է սիրաւ տիեզերաց, իւր բաղա-
մամբ ամենի կենդանարարը. բոլոր աստղե-
րը նորա չորս կողմովը սփռուած տարա-

ծուած անեղր անբաւութեան մէջ, զար-
դարում են շքեղապէս երկնային կամա-
րը: “Նոցա պայծառութիւնը, շւացուցիչ
տեսարանը, որ ընծայում են մեր աչաց,
ազդում են մեր հոգուն խոնարհութիւն
և հեղութիւն:

Տապակեղ թեթալիդի հովիտների մէջը
երբէք ջրոյ կաթիլ մի չի թրջում՝ որ պէտք
է տալ այնքան նկատողութեան: Ղիշեր-
ները այն տեղ միշտ պարզ են, և նոցա
սքանչելի դմբէթին տակ, աստղերը, երկ-
նից այս անթառամ ծաղիկները, ինչպէս
անուանում է նրանց սուրբն Բարսեղ,
վերացնում են մարդոյ միտքը երեւելէն
առ աներեւոյթն. “Նշրկինք պատմեն ըզ-
փառս Աստուծոյ”, և ճանաչուած և հա-
շուած աստեղաց թիւը նշանաւոր է: Աստ-
ղաբաշխները հաշւում են մօտ երեք հա-
զար. այս այն աստեղաց թիւն է, որոնք
կարող է մարդ նոյն վայրկեանի մէջ նշմա-
րել լոկ աչքով հորիզոնի վերայ: Իսկ ամ-
բողջ երկնքի երեսին, ամենասուր տեսա-
նելիքը՝ ամենաջինջ զիշերաց օդնութեամբ
անգամ չեն կարող հաշուել աւելի քան
զ6000 *):

(*) Բոննի դիտանոցի կառավարիչ Արթէլան-
դէրը, իւր Noubelle Uranometrie ի մէջ ասում է, որ
Բեքլինի հորիզոնի վերայ տարուայ մի ընթացքին
մէջ նշմարելի են բաց աչքով 3256 աստղ, Միւնա-
տերի աստղաբաշխ մի պ. Հէյդը պնդում է մի և
նոյնը, թէ իւր տեսութիւնը այնքան թափանցիկ
էր, որ նշմարել է 4000 աստղ աւելի քան իւր
ընկերակիցը. ըստ ասելոյ տը Հիւմբոլդի, Փարիզի
մէջ հաշւում են 4146: Բայց մեծ է շուտով
զանազանութիւնը, երբ որ խուզարկում են եր-
կնքը փոքր մի զօրեղ գործիքներով, և յայտն
բխակ. երկուորեակ համաստեղութեան անկիւնի